

Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
փետրվարի 22-ի N 193 - Ն որոշման

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2012 թվականի
մայիսի 17-ի N 629-Ն որոշման

Ձև

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՄԱՍԻՆ

Հարցերի դեպքում՝
Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա
Հասցեն՝ , հեռ.՝ , կայք՝

ՁԵՐ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1. Անունը, ազգանունը	
2. Ծննդյան ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը)	
3. Հանրային ծառայության համարանիշը կամ հանրային ծառայության համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը	
4. Հասցեն	
5. Էլեկտրոնային փոստի հասցեն	
6. Կենսաթոշակային հաշիվը	
7. Կենսաթոշակային հաշվի բացման ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը)	
8. Հաշվետու տարին	

Անձնական տվյալներում սխալների հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է ներկայացնել **անձնական տվյալները փոփոխելու մասին դիմում**՝ այցելելով հաշվի օպերատորներին կամ մուտք գործելով www.epension.am կայքի **Իմ հաշիվը** հավելվածը:

Այցելեք www.epension.am կայք՝ Ձեր հաշիվը **On-line** կառավարելու համար: Հաշվի օպերատորների ցանկին կարող եք ծանոթանալ՝ այցելելով www.cda.am կայք:

Աղյուսակ N 1

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձեր Ֆոնդը			
Ձեր ֆոնդի կառավարիչը			
Ձեր Ֆոնդի տարեկան եկամտաբերությունը	%		
Ձեր հաշվի մնացորդը՝ տարվա վերջի դրությամբ կազմել է			
Հաշվետու տարվա ընթացքում կուտակումները կազմել են (1+2+3)	դրամ		
	մասնակիցը	պետությունը	եկամուտը
	(1)	(2)	(3)

Աղյուսակ N 2

ՁԵՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ

Մուտք հաշվին (օրը, ամիսը, տարեթիվը)	Ամիսը, որի համար կատարվել է հատկացումը	Հատկացումը (դրամ)		Գործատուն	Գործատուի կողմից վճարված տույժը (դրամ)	Ընդամենը՝ հատկա- ցումները (դրամ) (3+4+6)	Ֆոնդը
		մասնակիցը	պետությունը				
(1)	(2)	(3)	(4)	(5)	(6)	(7)	(8)
Ընդամենը							

Աղյուսակ N 3

ՁԵՐ ՖՈՆԴԵՐԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆոնդը	Ֆոնդերի փայերի քանակը (հատ)		Փայի արժեքը (դրամ)		Փայերի ընդհանուր արժեքը (դրամ)		Ֆոնդի տարեկան եկամտաբերությունը	
	տարվա սկիզբը	տարվա վերջը	տարվա սկիզբը	տարվա վերջը	տարվա սկիզբը (2x4)	տարվա վերջը (3x5)	նախորդ տարին	հաշվետու տարին
(1)	(2)	(3)	(4)	(5)	(6)	(7)	(8)	(9)
							%	%
Ընդամենը								

Աղյուսակ N 4

ՓԱՅԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

Ֆոնդը							
ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը)	գործարքի տեսակը	Գործարքի հիմքը	Գործարքի գինը (դրամ) (5+6)	Գործարքի միջնորդավճարը (դրամ)	Փայի արժեքը (դրամ)	Փայերի քանակը (հատ)	Գործարքի գումարը (դրամ) (5+6)x(7)
(1)	(2)	(3)	(4)	(5)	(6)	(7)	(8)

Որոշ հատկացությունների մասին

1. **Ֆոնդ՝** ֆոնդի անվանում և տեսակ, որի փայերը ձեռք են բերվել տվյալ տարվա համար կատարված կուտակային հատկացման գումարով: Դրանք են՝
 - 1.1. **FIX՝** կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ (ֆոնդի միջոցներն ամբողջությամբ՝ 100 տոկոսով, ներդրվում են կայուն եկամուտ ապահովող և ցածր ռիսկային ֆինանսական գործիքներում (օրինակ՝ ավանդ, պարտատոմս և այլն).
 - 1.2. **CON՝** պահպանողական կենսաթոշակային ֆոնդ (ֆոնդի միջոցները, բացի կայուն եկամուտ ապահովող ֆինանսական գործիքներից, որոշ չափով (մինչև 25 տոկոս) ներդրվում են համեմատաբար ռիսկային ֆինանսական գործիքներում՝ օրինակ՝ բաժնետոմսերում).
 - 1.3. **BAL՝** հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդ (ֆոնդի միջոցները, բացի կայուն եկամուտ ապահովող ֆինանսական գործիքներից, կարող են մինչև 50 տոկոսի չափով ներդրվել համեմատաբար ռիսկային ֆինանսական գործիքներում):
2. **Ֆոնդի կառավարիչ՝** Ձեր կամ ծրագրի միջոցով ընտրված կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ, որն իրականացնում է կենսաթոշակային ֆոնդի կառավարում: Ներկայումս գործում են երկու կենսաթոշակային ֆոնդի կառավարիչներ՝ «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ (**AM**) և « Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ (**CQ**):
3. **Գործատուի կողմից վճարված տույժ՝** գումար, որն օրենքի համաձայն վճարում է գործատուն Ձեզ համար ժամանակին չմուծված կուտակային հատկացման գումարի 0.075 տոկոսի չափով:
4. **Ֆոնդի փայ՝** կենսաթոշակային ֆոնդին կատարված հատկացումների հաշվին ձեռք բերված փայեր: Օրինակ, եթե հատկացումների մեծությունը 15 000 դրամ է, իսկ մեկ փայի արժեքը 1500 դրամ, ապա Դուք ձեռք կբերեք 10 փայ:
5. **Փայի արժեք՝** Ձեզ համար ձեռք բերված կամ մարված մեկ փայի արժեքը՝

$$\text{Փայի արժեք} = \frac{\text{Ֆոնդի ակտիվներ} - \text{Ֆոնդի պարտավորություններ}}{\text{Ֆոնդի փայերի քանակ}}$$

6. **Գործարքի տեսակ՝** կենսաթոշակային հաշվով կատարված գործարքները լինում են երկու տեսակ՝ փայերի ձեռքբերում և փայերի մարում:
7. **Գործարքի հիմք՝** փայերի ձեռքբերումը կամ մարումը կատարվում է տարբեր հիմքերով: Օրինակ՝ փայերի ձեռքբերման գործարքի համար հիմք կարող է հանդիսանալ կուտակային հատկացումը: Փայերի մարման հիմք կարող է հանդիսանալ, օրինակ՝ հաշմանդամությունը:
8. **Գործարքի միջնորդավճար՝** միջնորդավճար, որը գանձվում է միայն ժառանգության ստացման (ժառանգած գումարի 2 տոկոս) և մասնակցի կողմից տարվա ընթացքում մեկից ավելի անգամ կառավարչի փոփոխություն կատարելու (փոխանցվող գումարի մեկ տոկոսի) դեպքում:
9. **Ֆոնդի տարեկան եկամտաբերությունը** հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\epsilon = \left[\frac{\Phi \text{ՀԱ}_1}{\Phi \text{ՀԱ}_0} - 1 \right] \times 100 \%, \text{ որտեղ՝}$$

- 1) $\Phi \text{ՀԱ}_0$ -ն հաշվարկվող ժամանակահատվածի առաջին օրվան նախորդող առաջին աշխատանքային օրվա համար հաշվարկված փայի արժեքն է.
- 2) $\Phi \text{ՀԱ}_1$ -ը հաշվարկվող ժամանակահատվածի վերջին օրվա համար հաշվարկված փայի արժեքն է:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ